Մարտի 7-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

02/03/13թ. «Ալաշկերտ»-«Գանձասար» խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Գրիգորյանի հեռացման, մրցակցին ոտքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ որակազրկել 4 խաղով, «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

02/03/13թ. «Ալաշկերտ»-«Գանձասար» խաղին «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Ալեն Համբարձումյանի հեռացման, մրցակցին ձեռքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ որակազրկել 4 խաղով, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

02/03/13թ. «Ալաշկերտ»-«Գանձասար» խաղին «Ալաշկերտ» թիմի գլխավոր մարզիչ Ալբերտ Սարգսյանի հեռացման, մրցավարներին հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

Ընդունել մրցավար Ա. Ղուշչյանի և տեսուչ Ա. Կնյազյանի զեկուցագրերը ի գիտություն, և 03/03/13թ. «Շիրակ»-«Արարատ» խաղին «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Դիդյեռ Բորիս Կադիոի փոխարեն զգուշացումը գրանցել Յորո Լամին Լիի վրա:

02/03/13թ. «Թալգրիգ-1-97-ֆզ»-«Օլիմպիկ-97ֆզ» խաղին «Թալգրիգ-1-97-ֆզ» թիմի կազմում չհայտավորված ֆուտբոլիստ մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Թալգրիգ-1-97-ֆզ» գրանցել տեխնիկական պարտություն, «Թալ-Գրիգ» ՍՊԸ-ին տուգանել 30000 դրամ: